ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՔԱՆԴԱԿՆԵՐԸ (XV—XVI ԴԴ.)

Գ. Հ. ԿԱՐԱԽԱՆՅԱՆ

Քարի վրա քանդակներ փորագրելը եղել է հայ ժողովրդական ստեղծագործության առավել սիրված և տարածված բնագավառներից մեկը։ Միջին դարերից մեզ հասել են ճարտարապետական հուշարձանների, խաչքարերի և տապանաքարերի վրա կատարված բազմաթիվ քանդակներ, որոնց մեջ մեծ թիվ են կազմում բարձրարվեստ երկրաչափական և բուսական քանդակները։ Հարուստ է նաև մարդկանց, կենդանիների, թռչունների պատկերաքանդակների մեզ հասած ժառանգությունը։ Այս քանդակներն ըստ բովանդակության կարելի է բաժանել երեք հիմնական ենթախմբի՝ կրոնական, առասպելական բովանդակությամբ և աշխարհիկ (կենցաղային) քանդակներ։ Աշխարհիկ, կենցաղային բովանդակությամբ քանդակները մեզանում մինչ այժմ բավարար չափով չեն ուսումնասիրվել։ Մեր մատենագիրների երկերում շատ չեն ժողովրդի զբաղմունքի, կենցաղի վերաբերյալ վկայությունները։ Նրանք առավելապես անդրադարձել են իշխող խավերի կենցաղի առանձին կողմերին։ Այդ բացը նշանակալից չափով լրացնում են միջնադարյան Հայաստանի կենցաղային քանդակները, ինչպես նաև գրչագրերում ծաղկողների թողած աշխարհիկ մանրանկարները։ XV—XVI դդ. այդ քանդակները, բացի իրենց ունեցած գեղարվեստական արժանիքից, կարևոր են նաև իբրև հայ ժողովրդի ամենատարբեր խավերի կյանքի ճշմարտացի արտահայտություններ։

Միջնադարյան հնավայրերից հայտնի, աշխարհիկ բնույթի, ձևի և նյութի մշակման ինքնատիպությամբ հետաքրքիր այդ քանդակներում հանդիպում են երկրագործական, որսորդական, արհեստավորական, հարսանեկան, կեր ու խումի, ժողովրդական մարզական խաղերի ու հանդիսանքների տեսարաններ։ XV—XVI դդ. պատկերաքանդակներում իր արտացոլումն է գտել երկրագործական կյանքի առօրյան։ Հայկական բարձրավանդակում կատարված հնագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանը երկրագործական մշակույթի հնագույն օջախներից է։ Նյութական մշակույթի, ընդ որում, նախնադարյան ժամանակների արվեստի հուշարձանները նյութեր են ընձեռում ոչ միայն բրիչային, այլև արորային երկրագործության մասին։ Հնագույն երկրագործական գործիքներից մեկով՝ արորով վար անելու տեսարան վերջերս հայտնի դարձավ մ. թ. ա. III հազարամյակի ժայռապատկերներից։ Սիսիանի շրջանի Ուղտասար հնավայրում, ուր պահպանվել են վիթխարի քանակությամբ ժայռապատկերներ, քարերից մեկի ողորկ մակերեսին որոշակիորեն վերարտադրված է արորով վարելու տեսարան։ Պատկերաքանդակի ձախ կողմում փորագրված է պրոֆիլ դիրքով դեպի աջ ուղղված մի ֆիգուր, որը արորի մաճին հենված քայլում է դեպի աջ։ Նրա առջևում արորին լծված են եզներ։ Վերջիններս պատկերված են սխեմատիկ. գտնվում են հակադիր՝ մեկը մարմնով վերև, մյուսը՝ ներքև դիրքերում։ Հատկապես շեշտ-

ված են եզների աղեղնաձև նշույրները։ Արորը ներկայացված է կառուցվածքային մանրամասներով (առատամ, մաճ, համձող, քարշաձող, լուծ)։ Ժայռաբեկորի մնացած պատկերազարդ մասը որսի տեսարան է (նկ. 1)։



Նկ. 1. Ժայռապատկեր, Ուզտասար, Սիսիանի շրջան

Հայաստանի գյուղատնտեսական տեխնիկան բնութագրելու, վարելու և երկրագործական գործիքների մասին նյութական վկայություններ են տալիս հնագիտական պեղումները։ Նշանակալից թվով երկրագործական գործիքներ են հայտնաբերվել վաղնջական ժամանակների, բրոնզի էպոխայի, ուրարտական և հետուրարտական հնավայրերից, սակայն առավել նշանակալից են միջնադարյան հնագիտական նյութերը[1]։

[1] Հայ մատենագրական աղբյուրներում պահպանվել են վարելու, բերքահավաքի և կալսելու բազմատեսակ գործիքների անուններ, ինչպես նաև հետաքրքրական տեղեկություններ միջնադարյան Հայաստանի երկրագործական սիստեմի մասին։ Ինչպես հայտնի է, անտառային և տափաստանային գոտիներում, հինավուրց ժամանակներից երկրագործության համակարգում իր որոշակի տեղն է ունեցել անտառահատական սիստեմը։ Հայաստանը թեև հարուստ չէ անտառներով, սակայն հողագործության անտառահատական սիստեմը միջին դարերում այստեղ ևս կիրառվել է։ Այդ մասին եզակի վկայություններ են պահպանվել մատենագիրների երկերում։ Արտակարգ կարևոր մի վկայություն մեզ է հասցրել Գր. Տաթևացին. «Սովորութի է երկրագործաց որք զմայրի և զխոպանացեալ երկիրն որ անպտուղ է, յորժամ կամին ի պտղաբերուի ածել նախ հրով այրեն զմայրիս և զհողն. և ապա հերկեն և սերմանեն. և պտուղ յոյժ բերէ» («Գրիգորի Տաթևացւոյ Գիրք քարոզութեան որ կոչի Զմերան հատորս», Պոլիս, ՌՃՁԹ, էջ 721)։

Հայաստանում երկրագործության մեջ IX—X դդ. առկա է եռադաշտը (С. Т. Еремян, Армения в IX, первой четверти XIII в. («Очерки истории СССР», ч. I, М., 1953, стр. 590). Միջնադարյան աղբյուրներից մեզ հայտնի են բազմազան մշակովի բույսեր, հացահատիկային

Հայաստանում քարի վրա փորագրված գութանով վարի տեսարաններ առայժմ հայտնի են XV դ.։ Նման տեսարաններով են զարդարված Կամոյի, Ապարանի, Հրազդանի, Մարտունու, Կարմիրի, Սիսիանի, Գորիսի և այլ շրջանների գերեզմանների կոթողները (նկ. 2)։

Նկ. 2. XVI դ. տապանաքար, Մարտիրոս, Եղեգնաձորի շրջան

Գութանավարի տեսարանով տապանաքար է պահպանվել Սիսիանի շրջանի Անգեղակոթ գյուղում։ Գյուղամիջի միջնադարյան գերեզմանատանը գտնվող օրորոցաձև տապանաքարի հարավային կողին, քանդակազարդ մակերեսի ամբողջ երկայնքով պատկերված է վարի տեսարան։ Ձախ կողմում

կուլտուրաներ, դրանց թվում նաև աշնանացան ցորենը։ Ահա միջնադարյան Հայաստանի ագրոտեխնիկայի մակարդակը հավաստող այդ հետաքրքրական տեղեկությունները. «Եւ ով իմաստուն տանուտերն նախահոգակ լինի՝ զայլ տարեանն ի յայս տարիս հոգայ և սերմանէ և զեզցենն այսօր՝ և ձմռանն յամառնա։ Այնուհետև «... որ պատուական սերմ է ի յայս տարիս սերմանեն, և միւս տարին հնձեն. ով ցորեանն. և որ անարգ սերմն է, ի նոյն տարին սերմանեն, և ի նոյն հնձեն. ով կորեկ, գարի և այլն։ ... յայլ այլ ժամանակս սերմանեն, ով յաշունն՝ ի գարուն. և ի մին ժամանակ հնձեն յամառն. և ի բազում տեղիս սերմանեն. և ի մին տեղիս ժողովեն ի կալն» և վերջապես. «Ութներորդ՝ զի պատուական սերմն ցորեանն է. ի մին տարին սերմանեն, և միւս տարին հնձեն. բայց որ չէ պատուական՝ ի նմին ամի սերմանեն, և ի նոյն ամի հնձեն. ով գարի և կորեկ։... Ութներորդ՝ զի ցորեանն յորժամ ի ներքոյ ձեանն մնայ, զարմատն ի հողն հաստատէ. և ի գարունն շարժի և բազում արդիւնս առնէ. ապա թէ պարզ լինի՝ չոր ցուրտն տանի և անպտուղ առնէ» («Գրիգորի Տաթևացւոյ Գիրք քարոզութեան որ կոչի Ամարան հատորս», Կ. Պոլիս, ՌՃՂ, էջ 379, 129—130, 379)։ Այսպես կարելի է վկայակոչել միջնադարյան Հայաստանի գյուղատնտեսության զարգացման մակարդակը բնութագրող և այլ հետաքրքիր վկայություններ, սակայն դա մեզ շատ հեռու կտաներ։ Դառնալով երկրագործական գործիքներին. հարկ է նշել, որ մատենագիրների երկերում վարող գործիքներից բազմիցս վկայակոչված է արորը։ Հաճախ մատենագրության մեջ և վիմագիր հիշատակարաններում արորը և գութանը հայտնի են միևնույն անունով՝ վեցկի, այսինքն երեք լծով՝ վեց եզներով գործի գրվող երկրագործական գործիք։ Հետաքրքրական է Սաղմոսավանքի գրատան XIII դ. նվիրատվական արձանագրությունը, որտեղ անվանված են Սասնա Վաչե և Գրիգոր եղբայրների կողմից իրենց ժառանգական հայրենիք հանդիսացող գյուղից վանքին տրված հանդերը, ինչպես նաև հիշատակված են մեկ գութանի հող (իրև մեկ օրում վարելիք հողի չափի միավոր), շրջի վարելահող, հավա-

տեղադրված է մարմինը երեք քառորդ թեքությամբ մաճկալը։ Քանդակագործը աշխատել է հետևել հեռանկարի որոշ սկզբունքներին։ Գութանի անիվները հավասարաչափ չեն. ակոսի միջով ընթացողը պատկերված է մեծ, մյուսը փոքր։ Քարի կոփածո մակերեսի մեծ մասը տրամադրված է լծկանին՝ գութանը քաշող եզներին։ Վերջիններս պատկերված են երկու շարքով, երեք զույգով։ Տապանաքարի նկարազարդ մակերեսի երեք կողմերը (բացի ստորինից) շրջանակավորված են երկշար, կեռմանաձև զարդագոտիով։

Կատարման բարձր արվեստով է աչքի ընկնում Սիսիանի շրջանի Տոլորս գյուղի գերեզմանատան կոթողը (XVI դ.)[2]։ Օրորոցաձև տապանաքարի հյուսիսային կողի կոփածո մակերեսն ամբողջ երկարությամբ ծածկված է քանդակներով։ Ձախ հատվածում հեծյալ է, աջ կողմում՝ գութանավարի տեսարան։ Վերջինս հորիզոնական առումով բաղկացած է երկու մասից. պատկերված են մաճկալը և գութանին լծված երկու զույգ եզներ։ Ամենայն մանրամասնությամբ վերարտադրված գութանի ետևում, երկու ձեռքերով մաճը բռնած, փոքր ինչ կռացած, ձախով գութանի ոտքը սեղմելու դիրքով կանգնած է մաճկալը։ Նա իր կեցվածքով ընդգծում է ուժային այն աշխատանքը, որը բնորոշ է հողագործին։ Մաճկալի և լծկանի միջև բավական խոշոր պատկերված են գութանի մեծ և փոքր անիվները։ Եզները ներկայացված են երկու շարքով՝ մեկը մյուսի ետևից՝ լծով իրար միացած։ Քանդակազարդ մակերեսի երկու կողերը զարդարված են երկշար սեպերով, իսկ վերին հորիզոնականը՝ հյուսվածքի գեղեցիկ զարդաքանդակով։ Օրորոցաձև այս տապանաքարի վերին մասում փորագրված արձանագրությունից իմացվում է, որ այն կանգնեցվել է 1580 թ. ԵՍ ԳՈՂԱՄԻՐՍ, ՈՎԱՆԷՍ ՔԱՀԱՆԱՍ, ՈՐԴԻ ՄԱԿԱՍԱՐԻ ԿԱԿՆԵՑԻ ՏԱՊԱՆՍ ԵՂԲԱՒՐ ԻՄ ՎԱ(Ր)ԴԱՆԷՍ ԹՎԿ ՌԻԹ (1580)[3]։

Երկրագործական տեսարան է պատկերված Մարտունու շրջանի Ադամխան գյուղի տապանաքարերից մեկի հարավային կողին։ Տեսարանի ձախ կողմում քանդակված է մարդկային պատկեր, որը աջ ձեռքին բռնել է թաս, ձախով՝ գինու սափոր։ Փոքր-ինչ վերև վերարտադրված է ևս մի փոքր սափոր։ Երկրորդ ֆիգուրը սազ նվագող երաժիշտ է, կողքին ուտեստով լի պնակ, իսկ վերևում նետ ու աղեղ. այնուհետև՝ երկշարք դասավորությամբ ձիու պատկեր և չորս լծներով գութան։ Ձիու ամբողջ երկայնքով ձգված է օձ վիշապ, որը դուրս է գալիս բուսական զարդաձևից և գալարուն շարժումներով ձգվում դեպի ձիու պարանոցը։ Կենցաղային իրերից վերարտադրված են սափորներ։

նարար ջրովի մարդ կամ այդի։ ՇՆՈՐՀԱՒՔ ԱՄԵՆԱԿԱԼԻՆ ԱՅ ԵՍ ՍԱՍՆԷՍ ԵՒ ԵՂԲԱՐՔ ԻՄ ՎԱՋԷ ԵՒ ԳՐԻԳՈՐ ՄԻԱԲԱՆԵՑԱՔ ՍՐ ՈՒԽՏԻՍ ՍԱՂՄՈՍԱՎԱՆԻՑ ԵՒ ՏՈՒԱՔ Ի ՄԵՐ ՀԱՐԵՆՆ ԳԵՂԷՍ ԱՂԲՆԱԳԵՂՈ ՀԱՆԴԷՆ ՋՓՆՏԿԻՏԱՓՆ ՈՐՋԱՓ ՋՈՒՐՆ ԵԴՈՒՍ ԴԱ։ Ա։ ԳՈՒԹԱՆԻ ՀՈՂ ՃԱՂԱԳՈՎՆ ՋՐՈՎԻ ԵՒ ՍՈՔԱ ԽՈՍՏԱՅԱՆ Ի ՏԱՐԻՆ։ Գ ՊԱՏԱՐԱԳ ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԵԹԵ ՈՔ ՅԱՒԱԳԱՅ ՀԱԿԱՌԱԿ (արձանագրությունը կիսատ է թողնվել)։ Գութանի մասին է հիշատակում Առաքել Սյունեցին. «Իսկ գնդական արհեստք ամենայն գնդաձև մարմնով առնէ զգործ իւր և գնդական ասի, որպէս սայլն, որ հոլովի շարժմամբ և շահրի գունդն գութանին և ջրաղացին՝ կունդն և քարն» (Մատենադարանի ձեռագիր № 7950, էջ 79ա)։ Գութանը վկայված է նաև ժամանակագրություններում. «... որ և անկավ յամէն, գլուխ Դ՚Ռ (4000) դեկան և (յամէն) գութան ԺՌ (10000) դեկան» (Վ. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հ. I, Երևան, 1951, էջ 128)։

2 Վ. Բդոյան, Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երևան, 1972, էջ 182։

3 Արձանագրությունը բերում ենք մեր դաշտային օրագրից։

Տապանաքարի արևելյան ճակատին փորագրված է գեղեցիկ եղնիկ, որն իր վայելչագեղ շարժումով և մարմնի համաչափություններով կոթողի լավագույն քանդակաղարդ հատվածն է կազմում։ Կենդանու գլխավերևում գալարվելով վեր է բարձրանում վիշապ-օձը։ Այս քանդակի թեմատիկ բնույթը վերարտադրում է միջնադարյան հայ գրականությունից մեզ հայտնի այն ավանդությունը, որի համաձայն եղնիկը հանդես է գալիս իբրև օձահալած կենդանի։ Տապանագիրը փորագրված է կոթողի հարավային կողին, շրջանակից վերև՝ ԱՅՍ Է ՀԱՆԴԻՍՏ ԳԱՍԲԱՐԻՆ ԹՎ ՌԼ (1581)։ Երկրագործական տեսարան է պատկերված նաև Հրազդանի շրջանի Բջնի գյուղի միջնադարյան գերեզմանատանը գտնվող տապանաքարի մակերեսին։ Այստեղ վերարտադրված են մաճկալ և հորիզոնական դրված գութանի քարշաձողի շարունակությունը կազմող երկար մետաղե շղթա, որի երկու կողմերից լծված են հինգ զույգ եզներ։

Միջնադարյան Հայաստանի տնտեսության երկրորդ հիմնական ճյուղը անասնապահությունն էր։ Խաշնարածությունն իր արտացոլումն է գտել XV—XVI դդ. կենցաղային պատկերաքանդակներում։ Սևանա լճի ափամերձ բնակավայրերից, Սյունիքից և այլ տեղերից մեզ են հասել հովվական տեսարաններով հետաքրքիր կոթողներ։ Եղեգնաձորի շրջանի Սալլի գյուղի միջնադարյան գերեզմանատան XV դ. տապանաքարերից մեկի քանդակազարդ մակերեսին պատկերված է ձեռքերը կրծքին խաչած հովիվ (ամբողջ հասակով)։ Այս քանդակում ամենահետաքրքրականը հովվական պարագաներն են՝ խաշնարածի գավազանը, սրինգը, մկրատը և մի իր, որը ակներևաբար հովվական մաղախ է։ Ամբողջ աջակողմյան հատվածում ձգվում է ոչխարի հոտը, որին առաջնորդում է ներին։

Հովվական տեսարանով կոթող է պահպանվել Մարտունու շրջանի Աստղաձոր գյուղի միջնադարյան գերեզմանատանը։ Քանդակազարդող վարպետը քառանկյունաձև տապանաքարի արևելյան ճակատի վերևի մասը հարդարել է հինգ աստիճաններով։ Հյուսիսային կողի աջ հատվածում, քառանկյունի շրջանակի մեջ, պատկերված է ոչխար։ Աջակողմյան հատվածի ստորին մասում, աջից ձախ, պատկերված է հոտ՝ իրար հետևից ընթացող հինգ ոչխարներով, որոնց դարձյալ առաջնորդում է ներին։ Այս շարքից վերև վերարտադրված են հովվական սրինգ, փող, հովվական գավազան և դանակ։ Տապանաքարի բարձիկից վերև արված է երկթել հյուսվածքազարդ հիշեցնող գեղեցիկ զարդաքանդակ։ Կոթողի հարավային կողին քանդակված են հինգ զարդարուն խաչեր։

Քանդակագործության ժողովրդական ուղղության ներկայացուցիչների այս ժամանակահատվածի ստեղծագործություններում առանձնակի տեղ են գրավում որսի տեսարանները, որը բնական է ու հասկանալի (նկ. 3)։ Որսորդությունը միջին դարերում կորցնելով իր երբեմնի նշանակությունը դարձել էր բնակչության ամենատարբեր սոցիալական խավերի սիրած զբաղմունքը և ուներ մասամբ տնտեսական, մասամբ յուրօրինակ սպորտային, մարզական բնույթ։ Միջնադարյան Հայաստանում սպորտային նշանակություն ունեցող որսի մասին են վկայում պատկերաքանդակներում բազեով որս կատարելու տեսարանները։ Որսի հետաքրքրական տեսարան է պատկերված Սիսիանի

շրջանի Անգեղակոթ գյուղի օրորոցաձև մի տապանաքարի վրա։ Վերջինիս հարավային կողին վերարտադրված է կոմպոզիցիոն երկու դրվագներից բաղկացած կենցաղային մի քանդակ։ Դրվագները միմյանցից բաժանված են վահանաձև զարդաքանդակով, որը տեղադրված է քարի երկայնական մասի կենտրոնում և իր նմանատիպերն ունի պատկերազարդ քարի աջ և ձախ ծայրերում։ Դրանով հորինվածքային երկու դրվագներն առնվում են վահանաձև



Նկ. 3. XVI դ. տապանաքար, Անգեղակոթ, Սիսիանի շրջան

զարդապատկերների մեջ։ Ձախակողմյան հորինվածքը պատկերում է աջ ձեռքում՝ թռչուն (ակներևաբար բազե), իսկ ձախում գավաթ բռնած հեծյալի, որը գլխին ունի երկու կողմերից ականջակալների նման դեպի ծնոտը իջնող գլխարկ։ Ձին պատկերված է շարժման մեջ, պոչը հանգուցված է։ Հետին աջ ոտքը մի փոքր ավելի մեծ է, մնացած ոտքերը խիստ սխեմատիկ են և պայմանական։ Ընդհանուր առմամբ համաչափությունները մասամբ պահպանված են։ Ձիու գլխի վերին աջ կողմում միջին վահանաձև զարդապատկերի եզրին պատկերված է մի թռչուն։ Զարդապատկերի հակառակ կողմում, համաչափության պահպանման նկատառումով, պատկերված է մեկ այլ թռչուն։

Աջակողմյան հորինվածքը ներկայացնում է միայն կենդանիների պատկերներ։ Այն բաղկացած է երկու՝ վերին և ստորին շարքերից։ Բոլոր կենդանիները գտնվում են շարժման, վազքի մեջ։ Պլաստիկայի ճշտության, ինչպես նաև համաչափությունների պահպանման տեսակետից առավել կատարյալը ստորին շարքի այծամն է։ Քանդակի ստորին մասը եզրափակված է գոտիով, որի վրա պատկերված են հավերժության երկու նշաններ։ Տապանաքարի վերին, երկթեք կողի մակերեսը զբաղեցնում է տեղ-տեղ վնասված տապանագիրը. ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ [ՇԱՊԱՆԻՆ ՈՐ] ԿԵՍԱՒՐԵԱ ՓՈԽԵՑԱՒ Ի ՔՍ. ԿԱՄԱՒՆ, ԱՅ ԵՍ ԲԱՂՏԱՍԱՐ ՇԻՆԵՑԻ ՁՏԱՊԱՆՍ ՁԱՅՍ ՀԱՒՐՆ ԻՄՈ ՇԱՊԱՆԻՆ։ ՈՂՈՐՄԵՍՑԻ ՔԵԶ ԱՇ ՁՀԱՒՐՆ ԵՒ ԹՈՂՈՒԹԻՒՆ ՇՆՈՐՀԵՍՑԷ [Յ]ԱՆՑԱՆԱՅ ՔՈՅ ԵՒ ՀԱՆԳՈՒՍՑԷ Ի ՀԱՆԴԵՐՁԵԱԼՆ. ԹՎ... ԻՄՈՅ ՊԱՂՏԱՍԱՐԻՆ ՅԻՇ[ԵՑԷՔ] Ի ՔՍ....[4]։ Շիրմաքարի հյուսիսային կողին քանդակված են խորհրդանշական

[4] «Դիվան հայ վիմագրության», պ. II, Երևան, 1960, էջ 120։

պատկերներ։ Ձախ կողմում, վահանաձև մի շրջանակի մեջ, արված են սուր ծայրերով դեպի կենտրոն ուղղված սեպանման զարգաձևեր, իսկ կենտրոնում կլորավուն ոճավորված զարդաքանդակ է։ Սրանից աջ պատկերված է կենաց ծառ, որն, ասես, կրկնում է մանրանկարներում հանդիպող նոան ծառի մոտիվը։ Ծառը բարձրանում է երկթեք գծայնությամբ արված պատվանդանի վրա, աջ և ձախ տարածվող ճյուղերն ավարտվում են նոան երկու պտուղներով։ Ծառի վերին մասը վերջավորվում է նոան պատկերով, ստորին մասում, երկու կողմերից պատկերված են կտուցներով դեպի ծառաբունն ուղղված, ճյուղերին նստած թռչուններ։ Քանդակն արված է հստակ և պարզ արտահայտված գծայնությամբ, կլորավուն ուռուցիկ գծերի շեշտադրումով և նոան պատկերների ծավալային արտահայտչականությամբ։ Ծառի վերին, աջ անկյունում տեղադրված է ևս մի զարդապատկեր։ Սրանից աջ պատկերված են մեկը մյուսից փոքր-ինչ ներքև գտնվող երկու մարդկային ֆիգուրներ։ Ցածինը ձեռքին բռնած ունի սափոր, աջ ոտքը ծալված է դեպի ետ։ Վերին քանդակում պատկերված է երկու ձեռքերին թասեր բռնած, ծալապատիկ նստած մի մարդ։ Այս քանդակից աջ դարձյալ վահանաձև շրջանակն է, որով եզրափակվում է հյուսիսային կողի քանդակների շարքը։ Այս քանդակը ևս եզերված է հարթ մակերեսով, վրան հավերժական նշանի երկու պատկերներ ունեցող գոտիով։ Շիրմաքարի արևելյան ճակատի վերին մասում, կլորավուն զարդի մեջ փորագրված է վեցաթև աստղի պատկեր. ցածում մարդկային մի ֆիգուր, որը ձեռքերը պարզել է դեպի վեր և բռնել կլորավուն, հատած նուռ հիշեցնող զարդապատկերներ։

Որսի հետաքրքրական տեսարանով XVI դ. կոթող է պահպանվել Անգեղակոթի նույն գերեզմանատանը։ Ամբողջ պատկերի հորինվածքային հենքը երկու հեծյալներն են, որոնք հետապնդում են խուռնընթաց փախչող քարայծերին։ Երկու հեծյալներն էլ ձախ ձեռքով բռնել են բազե, աջ կողմի հեծյալի ձեռքին կա նաև գավ։ Հեծյալների արանքում պատկերված են մեկը մյուսից վերև փախչող երկու քարայծեր։ Ստորինի եղջյուրներին փաթաթվել է վիշապ։ Այստեղ ևս քանդակագործն, ակներևաբար, կամեցել է վերարտադրել հայ մատենագրությունից մեզ հայտնի այն ավանդությունը, որի համաձայն եղջերուները և քարայծերը վիշապասպան են։ Քանդակագործը հիանալի վերարտադրել է կենդանիների, մասնավորապես քարայծերի սլացիկ վազքը։

Տապանաքարի երեք տողից բաղկացած արձանագրությունը ազդարարում է հետևյալը. «ԵՍ ՄԱՏԱՂԷՍ ՎԵՐԸՍՏԻՆ ՆՈՐՈԳԵՅԻ ՁԵԱՁՍ ԵՒ ՁՏԱՊԱՆՍ ՊԱՊԻՆ ԻՄՈՅ ՊԱՂՏԱՍԱՐԻՆ. ՅԻՇԷՔ ԹՎ։ ՋՀԵ։ (1521 Թ.[5])։ Կոթողը կերտել է Ակոբ կազմողը։

Ուշագրավ է Վարդենիսի շրջանի Մեծ Մազրա գյուղի XVI դ. կոթողը։ Թեմատիկ առումով շիրմաքարի քանդակազարդ մակերեսը բաժանված է երկու մասի։ Ձախ կողմում որսորդական թեման է, աջում՝ կերուխումի տեսարան։ Որսորդության տեսարանն ավարտվում է հեծյալի և վիշապ օձի մենամարտի պատկերով։ Վիշապը պատկերված է նժույգի ոտքերի տակ, գալարուն շարժումներով, գլուխը վեր բարձրացրած։ Հեծյալը նրա երախն է մխրճել ձեռքում բռնած նիզակը։ Քանդակի երկու հատվածները միմյանցից անջատ-

5 Նույն տեղում, էջ 119։

ված են մարդկային պատկերով։ Աջակողմյան հատվածում պատկերված է ծալապատիկ նստած մի մարդ, առջևում ուտեստով լեցուն պնակ։ Քանդակաշարը եզրափակվում է երաժշտի պատկերով։ Երաժիշտը նույնպես նստած է և ձեռքին ունի սաղ։ Քանդակազարդ մակերեսի այս հատվածում պատկերված է նաև երկփող նվագարան։

Կենցաղային քանդակների մեջ մեծ տեղ են գրավում արհեստավորական տեսարանները, գդակ կարողի, պայտարի, դարբնի աշխատանքային գործիքները, ինչպես նաև կենցաղային առտնին գործածության իրերն ու առարկաները։ Իր բովանդակությամբ չափազանց հետաքրքիր է Մարտունու շրջանի Զոլաքար գյուղի XVI դ. կոթողի քանդակը։ Տապանաքարի վիմագիր հիշատակարանից տեղեկանում ենք, որ այստեղ պատկերված է մի գդակ կարող իր արհեստի բոլոր գործիքներով և որ այս գդակ կարող Գրիգորը ունեցել է քառասուն աշակերտ։ Արձանագրությունում ասվում է. ԵՍ ԳՐ(Ի)ԳՈՐ/Ս :Խ: (40) աշակերտ ուս(ու)ցի: Ես էնումս, Մարտիրոս կ(ա)ն(գեն)ցի տապ(ա)ն(ա)[6]:

Ինչպես մյուս քանդակները, այստեղ ևս հարթաքանդակ ֆիգուրները մակերեսի վրա տեղադրված են հիմնականում մեկ տողով, շարքով։ Ձախից առաջին պատկերը հեծյալն է, որի գլխի կողմերում պատկերված են հուշկապարիկներ։ Հեծյալին հաջորդում է կանգնած մարդու այլ պատկեր։ Այնուհետև գալիս են սաղ նվագողը և մի մարդկային ֆիգուր, որոնք նստած են միևնույն ծալապատիկ դիրքով և իրենց կեցվածքով ու հանդերձանքով գրեթե կրկնում են միմյանց։ Վերջինս, հավանաբար, գդակ կարող վարպետն է, որովհետև հենց այս պատկերի մոտ են փորագրված գդակ կարողի արհեստավորական գործիքները՝ մկրատը, քերիչը, գդակի կաղապարը և գդակ հարդարելու ծաղկաձև զարդերը։ Սրանցից վերև պատկերված է գոմշակովի տեսարան։

Դարբնի զնդան, պայտեր են վերարտադրված Խաչակապ (Ղուշչի) գյուղի կոթողի որս պատկերող հետաքրքիր հորինվածքում։ Գեղաքանդակ շիրմաքարի հարավային կողի ամբողջ մակերեսը պատած է մարդկանց և կենդանիների ֆիգուրներով, ինչպես նաև կենցաղային իրերի պատկերներով։ Քանդակի հերոսը պատկերված է որսի պահին՝ ձիու վրա նստած։ Հեծյալն ամբողջ մարմնով թեքված է առաջ և նիզակով կամենում է հարվածել իր առջևից ընթացող քարայծերին։ Նրա մարմինը պատկերված է պրոֆիլ, իսկ աջ կողքից կախված է կապարճը։ Ձիուցը նույնպես պատկերված է վազքի մեջ, որի ոտքերի տակ, գլխիվայր կա ևս մի կենդանի։ Ձիու առջևի ոտքերի տակ պատկերված է դարբնի զնդան, ձախում՝ պայտեր, իսկ աջ կողմում կանգնած է դարբինը մուրճը ձեռքին, ձախ ձեռքով պայտը բռնած։ Քանդակի վերին մասում տեղադրված են երեք քարայծեր։ Այստեղ քանդակագործի կատարողական վարպետությունը հասել է իր գագաթնակետին։ Հիանալի են վերարտադրված որսի կենդանիների շարժումներն՝ իրենց խաղի պահին։ Եղջերավոր այծը վազքով մոտենում է մյուս այծին, սա առջևի մի ոտքը բարձրացրել է և ասես աշխուժությամբ դիմավորում է մոտեցողին, որի մարմնի մեջ է մխրճվել որսորդի արձակած նետը։ Հետևից վազքով մոտենում է ձագը։ Ամբողջ քանդակը շրջանակավորված է հյուսվածքաձև զարդապատկերով։ Կոթողի արևմտյան ճակատին կարդում ենք՝ Թ(Վ)ՌԷ (1558):

---

6 Նույն տեղում, պ. IV, Երևան, 1973, էջ 196։

Միջնադարյան Հայաստանում տարածված արհեստ էր գորգագործությունը։ Միջին դարերից մեզ են հասել, թեև սակավաթիվ, սակայն աչքի ընկնող նմուշներ։ XVI դ. կենցաղային քանդակներում պատկերվել է գորգագործի տորքը։ Այն հանդիպում է Մարտունու շրջանի Զոլաքար գյուղի կոթողի վրա։ Օրորոցաձև այդ շիրմաքարի մակերեսը զարդարված է մարդկային ֆիգուրների և կենցաղային իրերի պատկերներով։ Ձախ կողմում տեղադրված են հավերժության նշան, սափոր, ուտեստով լեցուն պնակ, ապա՝ ձեռքերը կրծքին խաչած, ծալապատիկ նստած մի մարդ, որին հաջորդում է միջին դարերում լայնորեն տարածված երկփող նվագարանը։ Ամբողջ պատկերի մեջ առավել մեծ հետաքրքրություն է ներկայացնում գորգագործի ուղղանկյունաձև տորքը, որի վրա դրված են թելերի երկու կծիկներ։ Սրանք ընդգծում են պատկերված առարկայի տորք լինելը։ Ապա հաջորդում է շարքն ավարտող մարդկային պատկերը, որն աջ ձեռքին բռնել է, ակներևաբար, քարգահ (գորգագործի գործիքը)։

Միջնադարյան կոթողների վրա իրենց գեղարվեստական մարմնավորումն են ստացել հայ երաժշտության, երաժշտական գործիքների պատմության համար չափազանց կարևոր լարային, շնչական, հարվածային գործիքները և երաժիշտների պատկերաքանդակները (նկ. 4, 5, 6)։ Միջին դարերի երաժշտական գործիքների տեսակների մասին բազմաթիվ ապացույցներ կան գրչագիր մանրանկարներով զարդարված մատյանների էջերում[7]։

Հետաքրքիր է, որ նվագարանների քանդակները զարմանալի համահունչություն են մանրանկարներում հանդիպող երաժշտական գործիքների պատկերներին։ Սրանցում պատկերված են երաժիշտներ, գուսաններ, որոնք զվարճացնում էին ժողովրդի ամենատարբեր խավերին՝ տոնախմբությունների, հարսանեկան խնջույքների և կեր ու խումի միջոցին։

Նվագածու գուսանների քանդակներ են վերարտադրված պատմական Կոտեից գավառի (Աբովյանի շրջան) Առինջ գյուղի միջնադարյան գերեզմանատան XV դ. օրորոցաձև տապանաքարի վրա, որի հարավային քանդակազարդ կողին պատկերված են մի շարք մարդկային ֆիգուրներ և կենցաղային տեսարան։ Ըստ էության պատկերի ընդհանուր բովանդակությունը խնջույքի թեման է։ Ամբողջ հարթության վրա փորագրված են հինգ մարդկային պատկերներ և մի քանի կենցաղային իրեր։ Ձախից աջ տեղադրված են երկու սափորներ, ապա՝ գրեթե միևնույն դիրքով երկու մարդկային ֆիգուրներ, որոնցից առաջինը ձեռքը մեկնել է դեպի սափորը։ Հորինվածքը չխախտելու նպատակով քանդակագործն, այնուհետև, պատկերել է ուտեստով լեցուն երեք պնակներ։

Թեմատիկ առումով հետաքրքիր են վերջին երեք ֆիգուրները, որոնք երաժիշտներն են։ Առաջինը քանոնահար է, երկրորդը՝ փողհար (ակներևաբար զուռնա նվագող), երրորդը՝ լարային գործիք նվագող։ Շիրմաքարի հյուսիսային կողին փորագրված են կենդանական երեք պատկերներ։ Առաջինում տեղադրված է երկգլխանի ձիու քանդակը, մի գլուխը առջևից, մյուսը ներքևից։ Գլուխները թեքված են միմյանց ուղղությամբ, ստեղծելով համաչափ դասավորություն։ Պատկերման այս եղանակը ժողովրդական քանդակագործության

7 Ա. Գևորգյան, Արհեստներն ու կենցաղը հայկական մանրանկարներում, Երևան, 1973, աղ. 43—48։

մեջ ունի ավանդական խոր արմատներ, որոնք տանում են դեպի հեռավոր անցյալը։ Երկրորդ պատկերն իրենից ներկայացնում է ցուլի և առյուծի մենամարտը։

Նկ. 4. XV դ. տապանաքար, Գեղովիտ, Մարտունու շրջան

Երաժշտական գործիքների պատկերներով է զարդարված Մարտունու շրջանի Ներքին Գետաշեն գյուղի կոթողը։ Տապանաքարի հարավային կողն ամբողջապես ծածկված է տարբեր չափերի մարդկային, կենդանիների, ինչպես նաև նվագարանների, կենցաղային բազմատեսակ իրերի պատկերներով։ Քանդակազարդ մակերեսի վերին մասը պատկերում է քամանչա՝ իր աղեղով, ապա եղջերու և քարայծ։ Վերին շրջանակի եզրային անկյուններում տեղադրված են ուղղանկյունաձև զարդապատկերներ, որոնք ամփոփված են կիսա-

Նկ. 5. XVI դ. տապանաքար, Գեղարքունիք, Կամոյի շրջան

շրջանի մեջ։ Ներքևից ներքև մարդկային ֆիգուրներ են, իսկ սրանց կողքին սեղանաձև քանոնի քանդակ։ Մարդկանցից առաջինը ձեռքերը դրել է գոտկատեղին և վերարտադրում է պարային շարժում, երկրորդը նստած սազ է նվագում։ Քարի ստորին մասի վրա տեղադրված է առավելապես մարդկային պատկերներով մի ուրիշ գոտի։ Սրա առաջին քանդակը պատկերում է ձեռքին



Նկ. 6. XVI դ. տապանաքար, Գեղովիտ

սազ բռնած հեծյալ։ Աջ կողմում ուղղանկյուն մի սեղան է, որի վրա դրված են գինու սափոր, հաց, ուտեստով լի պնակներ, այնուհետև պատկերված է ձեռքերը կողքերին դրած մարդ, որը հանդես է գալիս պարողի դերում։ Ստորին գոտին եզրափակում է մի այլ հեծյալի քանդակ, որն ի տարբերություն ամբողջ քանդակի խրախճանքի տրամադրությանը, ունի ռազմաշունչ բովանդակություն. հեծյալը ձեռքին բռնել է ոչ թե գավաթ կամ նվագարան, այլ կորաշեղբ սուր։ Գերեզմանաքարի այս կողի շրջանակին փորագրված է ՍԲ ԽԱՉԱ ՐԱՐԵԽԱԻՍ(Է) ՊԱՐՈՆ ՊԱՊԻՆ ՈՐԴԻ ՄԻՐՋԻՆ։

Հայ միջնադարյան ժողովրդական արվեստի ստեղծագործություններում արտահայտություն են գտել աշխարհական վայելքները, մասնավորապես կերու խումի խոսուն պատկերներն ու հարսանեկան կենաց ծառը (նկ. 7)։ Քանդակազարդող վարպետներն այստեղ աշխատել են հարազատ մնալ ավանդականին։ Առանձին դեպքերում մանրանկարչական ոճով կատարված կենաց ծառի՝ նոնենու վերձիգ բնի երկու կողմերում դասավորված են մի քանի ճյուղեր, որոնք վերջավորվում են նռան պատկերով։ Հարսանեկան կերուխումի սեղանը հորիզոնական ձգվածությամբ հաճախ բռնում է հորինվածքի քանդակազարդ մակերեսի ամբողջ ստորին մասը։ Մի հոդվածի սահմաններում անհնար է վկայակոչել հարսանիք պատկերող բոլոր նշանակալից քանդակները. հիշատակենք միայն մեկը։ Հրազդանի շրջանի Ներքին Քաղսի գյուղի տարածքում գտնվող շիրմաքարի քանդակի սյուժեն բաղկացած է երկու մասից, առաջինը՝ առավել ընդարձակը, հարսանեկանն է, երկրորդը՝ որսի տեսարան։ Հարավային կողի հարսանեկան տեսարան վերարտադրող քանդակում պատկերները

դասավորված են մեկ շարքով, դիմացից։ Ամբողջ հորինվածքը ավարտվում է մեծածավալ սափորներով։ Առանձնապես ճոխ է հարդարված հարսը։ Նրա գլուխը ծածկված չէ, սակայն երկու կողմերից իջնում են հյուսկեն ծամեր, որոնք, ասես, ողկուզվում են ոլորումների փռվածքով։ Հարսի պարանոցից կախված երկարավուն զարդերը ավարտվում են շղթայի օղակներ հիշեցնող



Նկ. 7. XVI դ. տապանաքար, Գեղովիտ

կլորավուն զարդերով։ Նրա հագուստի երկու կողմից՝ վերից վար ձգվում են, թերևս գործվածքի ձևով արված, բանվածքներ։ Կողքին պատկերված է կլորավուն գդակով և նույնպիսի ուղղահայաց գծեր (ակներևաբար ծալքեր) ունեցող տարազով փեսան։ Նա երկու ձեռքով բռնել է մի պնակ, որի վրա պատկերված է հավերժության նշան։ Այնուհետև գալիս են երկու երաժիշտները, որոնցից առաջինը քանոնահարն է, իսկ երկրորդը ողջ հասակով կանգնած սազը ձեռքին նվագածուն։ Շիրմաքարի այս կողի ստորին մասը շրջանակավորված է ծաղկաշղթա հիշեցնող զարդաքանդակով։

Հյուսիսային կողի պատկերների դասավորությունը հիմնականում երկշարք է։ Ձախ կողմում մեծ չափերով պատկերված է եղնիկ, նրա վերևում՝ մարդու գլխով, կենդանու մարմնով հուշկապարիկ, որից հետո փորագրված է ձախ ձեռքով ձիու սանձը բռնած մարդ։ Քանդակի շրջանակի գեր կատարող հարթ մակերեսը զբաղեցված է երկտող արձանագրությամբ՝ ԵՍ ՂԱԶԱՐ ԿԱՆՔԵՑԻ ԽԱՔԱՐՍ ԱԶԻՆ ՈՒԶՊԷԿԻՆ ԼԱՐԳՈՒԼԻՆ ԵՄ ՋՈՒՋԻՍ ԿԱՁՄԻ ԽԱՁՔՍ[8]։

Պատկերաքանդակներում չափազանց շատ են ինքնատիպ ոճով ու արտահայտչականությամբ աչքի ընկնող ցլամարտի, առյուծի և ցուլի մենամարտի խիզախ տեսարանները։ Առյուծի և ցուլի մենամարտ պատկերող հետաքրքիր կոթողներից է Սիսիանի շրջանի Անգեղակոթ գյուղի մոտ գտնվող «Վարդան զորավար» անունով հնավայրի օրորոցաձև տապանաքարը, որի հարավային կողին պատկերված են երկու մարդկային ֆիգուրներ, իսկ ձախ կող-

8 Ս. Բարխուդարյան, Միջնադարյան հայ ճարտարապետներ և քարգործ վարպետներ, Երևան, 1963, էջ 172։

մում՝ ձի։ Հյուսիսային կողին փորագրված է հայ միջնադարյան հուշարձանների հարդարանքում հաճախ հանդիպող առյուծի և ցուլի մենամարտի տեսարան։ Ի տարբերություն նույնատիպ այլ քանդակների, ուր սովորաբար ընդծվում է առյուծի զորեղությունը (Ցախաց քար, Մակարավանք և այլն), այս քանդակում առյուծին նախապատվություն տալու որևէ ակնարկ չկա։ Երկու կենդանիներն էլ պատկերված են դիմացից, մենամարտը սկսելու պահին։ Առյուծը ներկայացված է ցատկ կատարելիս, իսկ ցուլը եղջյուրներն ուղղել է դեպի գազանը, պատրաստվում է դիմագրավելու գազանի ահեղ ցատկը։ Տապանաքարի վրա կա հետևյալ արձանագրությունը. ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՋԱՆԻ-ԲԷԿԻՆ. ԹՎ. ՋՂԹ։ (1550)[9]։

Հետաքրքրական են շիրմաքարերի վրա փորագրված շղթայված առյուծների քանդակները։ Այդպիսի պատկերաքանդակով է հարդարված Անգեղակոթի օրորոցաձև տապանաքարերից մեկը։ Կոթողի հարավային կողի ձախ կողմի մեծ մասը զբաղեցնում է առյուծի, ապա մարդու քանդակը, որից հետո աշխատանքային գործիքները և կենցաղային իրերը, որոնք ըստ էության կազմում են քանդակի առանցքը։ Աջ կողմում են գտնվում փախչող եղջերուն, խոյերը և սրանց հակառակ ուղղությամբ դրված քարայծը։ Քանդակազարդ շարքն ավարտվում է աղեղով զինված որսորդի պատկերով, որը հետապնդում է փախչող կենդանիներին։ Ձախ հատվածում առյուծի պոչը կամարաձև բերված է մեջքի վրա, իսկ վզին գցված շղթան, որը կախված է պարանոցի տակ, ավարտվում է հանգուցավորվող զարդաքանդակով։ Առյուծի շղթայված լինելը ակներևաբար վկայում է շարը սանձելու, հաղթահարելու, շարի նկատմամբ հաղթանակ տանելու փաստը։ Շիրմաքարի հյուսիսային կողին պատկերված է որսի տեսարան։ Շիրմաքարի արձանագրությունից իմացվում է, որ այն կանգնեցվել է ՋՁԵ (1536) թվականին։

Պատկերաքանդակներում իր գեղարվեստական մարմնավորումն է գտել վիշապամարտի թեման (նկ. 8, 9)։ Վարդենիսի շրջանի Ջառքենդ գյուղի միջնադարյան գերեզմանատանը օրորոցաձև տապանաքարի հարավային կողին պատկերված է կիսաառասպելական որսորդական տեսարան։ Հիմնական թեման կռիվն է օձ-վիշապների հետ։ Ձախակողմյան մասը զբաղեցնում է հեծյալի ֆիգուրը, որը նիզակը մխրճել է օձ-վիշապի երախի մեջ։ Օձը գալարաձև ընկել է ձիու սմբակների տակ և գլուխը վեր է բարձրացրել խայթելու համար։ Ձիու առջև պատկերված է ինչ-որ մի այլ կենդանի։ Ձիու սմբակների տակ տրորվող երախի մեջ մխրճված նիզակով վիշապի այս հանրահայտ սյուժեն XV—XVI դդ. ստացել էր հասարակական այլ հնչեղություն, այն իմաստավորում է ընդվզումը շարի դեմ, հայրենի երկիրը ներխուժածի դեմ։ Մի փոքր վերև, դեպի աջ պատկերված է ձեռքին դինու սափոր և գավաթ բռնած մարդկային կերպար, որն, ասես, հաղթանակը ողջունողի խորհրդանշան է։ Գավաթը զարդարված է հավերժական նշանի պատկերով։ Այնուհետև ներկայացված է եղջերու՝ սլացիկ վազքի պահին։ Քանդակը եզրափակող մասը նույնպես ունի ինքնուրույն հորինվածքային լուծում, որտեղ ավելի հստակ է երևում նրա հիմնական հեքիաթային թեման։ Այստեղ երկու խճճված օձերի մարմիններ են. կծիկի միջից ցցված են վիշապների գլուխները, որոնք կուլ են տվել գառանը և այծին։ Վերին մասում, որտեղ պատկերված է գառը, օձի բերանի մեջ

9 «Դիվան հայ վիմագրության», հ. 2, էջ 124։

են նրա առջևի ոտքերը, իսկ ստորին մասում այծը կիսով չափ վիշապի երախի մեջ է։ Պատկերն արված է շարի նկատմամբ ցասում առաջացնելու միտումով։ Տեսարանում չի շրջանցված մարդու մասնակցությունը։ Վերին աջ ան-



Նկ. 8. XVI դ. տապանաքար, Զառքենդ, Վարդենիսի շրջան

Նկ. 9. XVI դ. տապանաքար, Գեղովիտ

կյունում ծնկաչոք դիրքով պատկերված է լարած աղեղով նետաձիգը։ Քանդակազարդ կողի ամբողջ մակերեսը երիզում են օվալաձև զարդաքանդակների հյուսվածքաձև դոտիները։

Խաչքարերի, գերեզմանական կոթողների վրա եզակի չեն ժողովրդական հանդեսներ ու մարզական տոնախմբություններ պատկերող թեմաները։ Հայ քանդակագործության դարավոր ավանդույթներին հավատարիմ XV—XVI դդ. քանդակագործ վարպետների հարթաքանդակային բնույթի ստեղծագործություններում դդալի տեղ են գրավում խոյամարտի տեսարանները։ Հիշատակենք դրանցից մի քանիսը։ Սիսիանի շրջանի Տոլորս գյուղի գերեզմանատանը պահպանված շիրմաքարի հյուսիսային կողին պատկերված են երկու խորաններ, որոնց մեջ տեղադրված է մեկական զարդարուն խաչ։ Զարդաքանդակի աջ կողմում վերարտադրված է մի հեծյալ և մեկ հետիոտն, որը բռնել է նժույգի սանձից։ Տապանաքարի աջակողմյան հատվածի վերին անկյունում քան-



Նկ. 10. XVI դ. տապանաքար, Կարճաղբյուր, Վարդենիսի շրջան

դակագործը զետեղել է դեմ առ դեմ կանգնած երկու կռվող խոյեր։ Հետիոտնը աջ ձեռքում բռնել է գինու գավ։ Այս քանդակում առավել հետաքրքրականը խոյամարտն է։ Տապանաքարի վերին՝ ավարտվող մասի երկթեք լանջին գրված արձանագրությունից տեղեկանում ենք, որ այն կանգնեցվել է ՌԼԲ (1582) թ.։

Խոյամարտի տեսարանով է հարդարված Վարդենիսի շրջանի Զառքենդ գյուղի կոթողը. վերջինս քանդակազարդված է երկու կողմից։ Քանդակապատ տարածությունը բաժանված է երկու շարքի։ Վերևի շարքում պատկերված են երկու հեծյալներ, որոնք հարձակվում են մեջտեղում գտնվող եղջերուի վրա։ Ձախ կողմի հեծյալը զինված է տապարով, աջակողմյանը՝ կորաշեղը սրով։ Ստորին շարքի քանդակներում վարպետը պատկերել է խոյամարտի տեսարան։ Խոյերը պատկերված են դեմ առ դեմ կանգնած, գլուխները մի փոքր դեպի վեր, այն պահին, երբ դեռ նոր պետք է սկսեն կռիվը։

Միջնադարյան քարգործ վարպետների թողած կոթողների սյուժեներում արտահայտություն են գտել նաև կյանքի պատահարները (նկ. 10)։ Այդ առումով հետաքրքիր է Վարդենիսի շրջանի Կարճաղբյուր գյուղի խմբաքանդակը։ Օրորոցաձև տապանաքարի հարավային կողի ձախ հատվածն ամբողջությամբ զբաղեցնում է նժույգի պատկերը, ապա՝ մեկը մյուսից վերև տեղադրված երկու մարդկային պատկերներ։ Սրանց հաջորդում են մկրատը ձեռքին մի փոքր

ֆիգուր և երկու նվագածներ։ Պատկերաքանդակի բովանդակությունը հետևյալն է. հանգուցյալը մահացել է ձիու հարվածից։

XII—XVI դդ. կենցաղային բովանդակություն ունեցող քանդակներում հանդիպում են նաև գավաթների, սափորների պատկերներ։ Այդ քանդակնե-

Նկ. 11. XVI դ. խաչքար, Ջուղա

րից ուշագրավ է Ջուխտակ վանքի XII դ. եկեղեցու արևմտյան պատին, ճակատոնից ներքև, պատուհանի պսակի ձախ եզրին, վերարտադրված սափորի քանդակը և աջ եզրի հավերժության նշանը։ Կամարաձև պսակի վրա փորագրված է ճարտարապետի անունը. ՍԱՐԳԻՍ ՎԱՐԴՊԵՏՍ ՅԱՂԱԻԹՍ ՑԻՇԵՑԵՔ։

Աշխարհիկ տեսարաններով են զարդարված նաև Ջուղայի հռչակավոր խաչքարերն ու խոյաձև տապանաքարերը (նկ. 11)։

Վկայակոչված կոթողների ամբողջ շարքը կրում է աշխարհիկ, կենցաղային բնույթ և հավաստում է ժողովրդի հասարակական մտածողության աշխարհականացումը, աշխարհիկ բովանդակություն ունեցող քանդակների պատմա-մշակութային անուրանալի արժեքն ու նշանակությունը։ Միջնադարյան հայ արվեստի ժողովրդական ուղղության ներկայացուցիչների՝ քարգործ-քանդակազարդող վարպետների ստեղծագործություններն աչքի են ընկնում ոչ միայն կատարողական վարպետությամբ, արտահայտչականությամբ, այլև թեմատիկ բազմազանությամբ։ Այդ թեմաները մինչև XV դ. հայտնի էին մեր քանդակագործությանը։ XV դ. և հետագա դարերում ստեղծվածներն, ի տարբերություն նախորդ շրջանի աշխարհիկ քանդակների, պատկերում են ոչ թե իշխող դասակարգի, ֆեոդալական վերնախավի, այլ աշխատավորության, բուն ժողովրդի զբաղմունքը, կենցաղը։ Կենցաղային բովանդակություն ունեցող, գրչագիր մանրանկարներին համահնչյուն այդ քանդակներն արտահայտելով երկրագործական, հովվական, որսորդական, արհեստավորական, հարսանեկան, կերուխումի և այլ տեսարաններ, աչքի են ընկնում իբրև իրականության չափ հավաստի, խոսուն, կենդանի ազգագրական նյութ, առարկայորեն գծված կենցաղի իրերով ու առօրյա հետաքրքրական դրվագներով։ Հաղարամյա ավանդույթներին հավատարիմ միջնադարյան քանդակագործ-կազմողների առավելապես պատմողական բովանդակություն ունեցող այդ աշխատանքները լրացնում են հայ ժողովրդի անցյալի զբաղմունքի, կենցաղի մասին մեր պատկերացումները։

Հայ ժողովրդի միջնադարյան կենցաղային քանդակները կարևոր նյութեր են ընձեռում քանդակագործության զարգացման ընթացքն ու օրինաչափությունները, առանձին դպրոցները և ամբողջական պատկերը ուրվագծելու համար։

СРЕДНЕВЕКОВЫЕ БЫТОВЫЕ РЕЛЬЕФЫ АРМЕНИИ (XV—XVI вв.)

Г. О. КАРАХАНЯН

Резюме

Бытовые рельефы обычно делались на различных мемориальных и архитектурных памятниках. Отличительной чертой этих рельефов является подробное воспроизведение происходящего действия, что представляет большую ценность в качестве исторического материала. Творчество ваятелей народного направления стало предметом специального изучения экспедиции Института археологии и этнографии АН Армянской ССР, которая во время полевых работ 1955—1975 гг. собрала богатый материал. На рельефах встречаем многочисленные сюжеты земледельческого, пастушеского, ремесленнического, охотничьего, свадебного, спортивного характеров, а также народных празднеств и пиршеств.